

ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝

28.03.2023 կայացած նիստի

թիվ 7 արձանագրություն

Գիտխորհրդի թիվ 7-րդ նիստին 36 անդամներից ներկա էին 27-ը :

ԵԼՀ դեկան Գ.Բարսեղյանը ողջունեց գործընկերներին և անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության հետ կապված աշխատանքների կատարման ընթացքին: Ներկա գտնվողները փաստեցին, որ թե՛ դիպլոմային աշխատանքների և թե՛ մագիստրոսական թեզերի հետ կապված աշխատանքների ընթացակարգը բնականոն հունով է ընթանում, բացառությամբ որոշ դեպքերի: Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ Բ.Գ.Դ., պրոֆեսոր Շ. Պարոնյանը նշեց, որ իր բաժնում մագիստրոսական թեզերի նախնական քննարկումներ է կազմակերպել և խնդրահարույց դեպքեր չկան, սակայն ավարտական աշխատանք գրողների մեջ կա մի ուսանող, ով դեռևս ոչինչ չի ներկայացրել: Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ., դոցենտ Գ.Սարգսյանը նույնպես նշեց, որ մի ուսանողուհու հետ չի կարողանում կապի դուրս գալ, աշխատանքն էլ մինչ այժմ կատարված չէ: Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Բ.Գ.Դ., դոցենտ Հ.Բաղդասարյանը նշեց, որ իր բաժնում ընդհանուր առմամբ ամեն ինչ նորմալ է, սակայն հավելեց, որ կան ուժեղ և թույլ աշխատանքներ: Կան ուսանողներ, ովքեր լավ չեն պատկերացնում գիտական աշխատանք գրելու գործընթացը և չեն տիրապետում հմտություններին: Ըստ Հ.Բաղդասարյանի դրա հիմքում ընկած է կուրսային աշխատանք գրելու բացակայությունը: Նա նշեց, որ ուսանողի համար բարդ է միանգամից գրել ավարտական աշխատանք և ապահովել գիտական պահանջները: Փոխդեկան Ն.Մաղոյանը, այս հարցի կապակցությամբ նշեց, որ ուսանողները, երկրորդ կուրսից սկսած, չորս հետազոտական աշխատանք են ունեցել, ինչը իրենց ապահովել է որոշակի փորձ գիտական աշխատանքի գործընթացը իրագործելու համար: Հ. Բաղդասարյանը հետազոտական աշխատանքի առումով հարց ուղղեց կոլեգաներին, թե ինչպես պետք է կազմակերպել և 50 ուսանողներին վերահսկել այդ գործընթացում: Ն.Մաղոյանը պատասխանեց՝ նշելով, Հ. Ժամհարյանը և Է. Արիյանը քննարկումների ժամանակ նշել են, որ ուսանողների մեծ քանակի դեպքում անհնար է վերահսկել այդ գործընթացը: Ընդհանուր առմամբ, բոլորն էլ այն կարծիքի են, որ հարցը պետք է վերանայվի: Ուսխորհրդի նախագահ Գ.Հարությունյանը ևս հանդես եկավ առաջարկով՝ կազմակերպել սեմինարներ՝ ուսանողներին օգնելու գիտական աշխատանք գրելու և հմտություններին ավելի հանգամանալից ծանոթացնելու գործընթացում: Դեկան Բարսեղյանը առաջարկեց այդ հարցին ավելի հանամանալից անդրադառնալ մոտ ժամանակահատվածում՝ առանձին հանդիպում կազմակերպելով:

Դեկանը, անդրադարձավ օրակարգի երկրորդ հարցին՝ 2022-2023 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցի հաստատմանը, խոսքը փոխանցեց փոխդեկան Մ.Յաղուբյանին, ով ներկայացրեց ընդհանուր դրույթները: Նա ասաց, որ ընթացակարգային հարցեր են փոխվել, դասախոսները տեղեկագրերը պետք է ժամանակին

առցանց լրացնեն և տեղավորվեն տրված վերջնաժամկետի մեջ: Հակառակ դեպքում ծրագիրը փակվում է յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

Դեկանը անդրադարձավ օրակարգի մյուս հարցին՝ որոշ մասնագիտությունների մասով մասնագիտական պրակտիկայի կատարված աշխատանքների ամփոփմանը: Նա խոսքը փոխանցեց փոխդեկան Ն.Մադոյանին: Ն.Մադոյանը նշեց, որ փետրվարի 6- ից մարտի 17-ը ԵԼՀ ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանողները անցել են մասնագիտական պրակտիկա: Ընթացքում ծագել են որոշ դժվարություններ, քանի կազմակերպությունները բնութագրեր չէին տալիս, բայց նշվեց, որ ամեն ինչ հաղթահարվել է: Բարդություն է ծագել նաև ծրագրի ղեկավարի համար. այսուհետ, իրենք են կազմակերպություններ գտնելու՝ պրակտիկայի գործնթացը ապահովելու համար: Հ.Բաղդասարյանը առաջարկեց, որ ծրագրի ղեկավարը համագործակցի մյուս դասախոսների հետ, քանի որ միայնակ այդ գործընթացը գրեթե անհնար է ապահովել: Գ.Բարսեղյանը հորդորեց ծրագրի ղեկավարներին ակտիվ լինել: Ծ.Պարոնյանը նշեց, որ ինքը, լինելով ծրագրի ղեկավար, մշակութային շատ վայրերի հետ է համագործակցել, ինչը հանգեցրել է հաջող գործընթացի: Մանկավարժական պրակտիկայի հետ կապված քննարկումներ եղան, առ այն, որ ուսանողներին հնարավորություն տան անցնելու պրակտիկան իրենց շրջաններում՝ մի փոքր թեթևացնելով իրենց ֆինանսական /կամ այլ բնույթի/ բեռը: Դեկանը, այս հարցի առնչությամբ, առաջարկեց հավատարիմ մնալ ԵՊՀ օրենքով սահմանված կարգին:

Անդրադառնալով օրակարգի չորրորդ հարցին՝ 2022-2023 ուս. տարվա 1-ին կիսամյակի սոց. հարցումների արդյունքների ամփոփմանը՝ դեկանը նշեց, որ մեծամասամբ արդյունքները գոհացուցիչ են, ավելի շատ դեպի դրականը տանող գործընթաց է նկատվում :

1. Ընթացիկ հարցեր:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

- Անգլերենի N2 ամբիոնի դոցենտ Մ. Կարապետյանի և դասախոս Ա. Պետրոսյանի *“Political Science and Public Administration: Language Practice”* /«Քաղաքագիտություն և հանրային կառավարում. անգլերենի դասընթաց»/ դասագիրքը երաշխավորել տպագրության: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Երաշխավորել Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Իշխան Դադյանի թեկնածությունը դոցենտի կոչում ստանալու համար: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Երաշխավորել անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ Ն. Գասպարյանին դոցենտի կոչման ներկայացնելու համար: Որոշումն ընդունվեց միաձայն:

- Երաշխավորել ՀՀ ԲՈԿ դիմելու և ամբիոնի դոցենտ, Բ.Գ.Թ. Ք. Հստույթ ու կյանքի անվտանգության ատենախոսությունների գիտական ղեկավարի կարգավիճակ շնորհելու մասին հարցը: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, Բ.Գ.Թ. Գոհար Հովսեփյանի «Գործաբանության և հաղորդակցության տեսության հիմնահարցեր» մենագրությունը տպագրության: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ, Բ.Գ.Թ. Մարիամ Խաժակյանի «Խոսքի գործառական-հաղորդակցական իմաստավորումը առողջանության միջոցով» մենագրությունը տպագրության: Որոշումն ընդունվեց միաձայն:
- հաստատել Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Մարինե Էվոյանի՝ «Միջանկյալ կառույցները որպես անգլերեն դիսկուրսի ձևավորման միջոց» թեման և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Թ., պրոֆեսոր Ատոլիկ Չուբարյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:
- հաստատել Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Սրբուհի Մինասյանի «Հաճոյախոսությունը լեզվագործաբանության լույսի ներքո» թեման և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Թ., պրոֆեսոր Ատոլիկ Չուբարյանին:
- աստեստավորել Անգլերենի թիվ 2 ամբիոնի հայցորդ Ք. Թորոմյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:
- աստեստավորել Անգլերենի թիվ 2 ամբիոնի հայցորդ Ռ. Բաղրամյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:

ղեկան և գիտխորհրդի նախագահ,

Բ.Գ.Թ., դոցենտ՝

Գիտխորհրդի քարտուղար, Բ.Գ.Թ., դոցենտ՝



Գ.Բադալյան



Մ.Դալայան

28.03.23.թ.